ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՆԺԵԼԱ ՕՀԱՆՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԶԵԿՄԱՆ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ գործառույթները՝

- Իրականացրել եմ Տեսչական մարմնի գործունեության ոլորտին առնչվող հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ հայտարարությունների և իրազեկման նյութերի տարածման աշխատանքներ:
- Մասնակցել եմ հասարակության իրազեկմանը՝ Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների, Տեսչական մարմնի ղեկավարի, այլ պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ տեղեկատվական նյութեր պատրաստելու և տարածելու միջոցով:
- Կատարել եմ Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկման աշխատանքներ:
- Ապահովել եմ Տեսչական մարմնի գործունեության լուսաբանումը՝ պաշտոնական կայքէջի և լրատվական այլ խողովակների միջոցով:
- Պատասխանել եմ 010650305, 010650553 հեռախոսահամարներով ստացված զանգերին և վարել զանգերի վերաբերյալ գրանցամատյանը:
- Ընդունել և հաշվառել եմ քաղաքացիների կողմից Տեսչական մարմնում ներկայացված դիմում-բողոքները:
- Պատրաստել եմ գրություններ՝ ի պատասխան քաղաքացիների կողմից ներկայացված գրավոր հարցումների:
- Պատրաստել եմ զեկուցագրեր՝ Տեսչական մարմնի գործունեության ոլորտին

առնչվող հարցերի վերաբերյալ ստացված ահազանգերի և լրատվամիջոցներում հրապարակված նյութերի հիման վրա:

- Մասնակցել եմ Տեսչական մարմնի կողմից կազմակերպված միջոցառման կազմակերպչական և տեխնիկական ապահովման աշխատանքներին:
- Իրականացրել եմ Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտներին իրենց գործունեությանն առնչվող, Տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող նոր ընդունված իրավական ակտերի կամ հրապարակված ուղեցույցների, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:
- Իրականացրել եմ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակման աշխատանքներ:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊՈՐՃԱԳԵՏ ՄԻԼԵՆԱ ԱԲԵԼՅԱՆ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ՝

գերազանց

ԱՆԺԵԼԱ ՕՀԱՆՅԱՆ